

Թատրոնը Շուշին առավել անառիկ է դարձնում

ՀՈԿՏԱՆՆԵՍ ԵՐԱՆՅԱՆ

Թատրոնը ֆաղաֆային արվեստ է, ստեղծում է ֆաղաֆային կենցաղ եւ հոգեբանություն, իր շուրջը հասարակություն է ձեւավորում, թելադրում հասարակական ձգտումներ ու ազգային իդեալ: Կարճ ասած՝ թատրոնը ֆաղաֆը ֆաղաֆ է դարձնում:

Շուշին երկար տարիներ եղել է հայոց մշակութային մայրաքաղաքներից մեկը, հոգեւոր բազմաթիվ օջախների կողքին մշտապես ունեցել գործող թատերախմբեր: Շուշի հյուրախաղերի են եկել հայ մեծագույն դերասանները: Բոլորին են հայտնի Պետրոս Ադամյանի հյուրախաղերը Շուշիում, որոնց ժամանակ շուշեցիները ստիպել են մեծ ողբերգակին «Համլետ»-ի փոխարեն իրենց ներկայացնել Գամառ Քաթիպայի մարտակոչ հիշեցնող բանաստեղծությունները: Այժմ Շուշին թատրոն ունի, եւ դա երեւակայական մի բան չէ, այլ առարկայական ներկայություն: Այնքան շոշափելի, որ համարձակվել է երկու բեմադրության մերկայանալ երեւանցիների դատին եւ հանդես գալ Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի բեմում: Իմ գեղարվեստական չափանիշներն այստեղ անկարելի են դառնում, եւ երեւոյթը կարելի էր ասել, որ այլ իմաստներով, թեպետ ներկայացումներն ընդունվում էին բուռն ոգեւորությամբ: Դրանք ոչնչով չէին զիջում, կամ շատ քիչ բանով էին զիջում մայրաքաղաքային երկարամյա գործունեության փորձ ունեցող թատրոնների ընդհանուր մակարդակին: Նոյեմբերի 19-ին շուշեցիները ներկայացրեցին Ֆ. Սոլոգուբի «Քնքուշ սրտից պատուհաս» ողբիլը, իսկ 20-ին Գրիգորի Գորինի

«Սոռանալ Հերոստրատին» տրագիկոմեդիան: Հանդիսատեսը եւ ծանոթ էր, եւ անծանոթ: Անծանոթներ թատերասրահներից, ծանոթ այլ ոլորտներից: Շուշին գրաված ազատամարտիկներ, նրանց կանայք ու երեխաներ: Շուշին վերագտնելու գեղեցիկ ճառերից բացի անհրաժեշտ էին նաեւ կոնկերտ գործեր: Թատրոնը մեր ծեւն էր, մեր ճակատը, - ասում է թատրոնի գլխավոր ռեժիսոր եւ Հերոստրատի դերակատար Գեորգ Գասպարյանը: Շատ թե քիչ, բայց բոլորս էլ ունենք գիտակցություն, որ արվեստն ու մշակույթն են ժողովրդի դեմքը: Կենցաղային, ֆինանսական, տնտեսական բազմաթիվ խնդիրները, որ ունի թատրոնը որպես կառույց, եւ ամեն մեկս որպես անհատ, հաղթահարում ենք գիտակցությամբ որ կամե՞ծագույն նպատակ: Շուշիին վերադարձնել իր նախկին հոգեւոր տեսքը: Դազանչեցոց չքնաղագեղ եկեղեցու կողքին պիտի լինեն նաեւ թատրոնը, եւ երջանիկ կլինենք, եթե մի օր այդքան գեղեցիկ լինի նաեւ թատրոնը: Սա պետական հոգածության առարկա է եւ համապետական խնդիր: Պարզ ասենք, բացի թատրոնի գեղագիտական խնդիրներից, մենք ունենք նաեւ արվեստից դուրս, ազգային ու հասարակական խնդիրներ, եւ սա է պատճառը, որ եղեգնածորից, երեւանից, Սումգայիթից, Ստեփանակերտից ու Շուշիից հավաքված

մի խումբ երիտասարդներով, արհամարհելով բոլոր կենցաղային դժվարությունները, փորձում ենք մեր նպաստը բերել այս կարելի գործին:

- Ողջ խաղացանկով եք եկել երեւան, թե՞, բացի այս երկու ներկայացումից, պատրաստի այլ բեմադրություններ էլ կան:

- Ունենք նաեւ մանկական ներկայացումներ «Նապաստակի տնակը», «Կարմիր գլխարկ» մյուզիքլը: Կան նաեւ նոր բեմադրությունների ծրագրեր: Այժմ պատրաստում ենք Նոր տարվա հանդեսը: Թատրոնում մի մասը պրոֆեսիոնալներ են, մյուս մասը մեծ ցանկություն ունի մասնագիտական կրթություն ստանալու: Ես ավարտել եմ երեւանի «Հայֆիլմ» կինոստուդիային կից կինոդերասանի ստուդիան, անմիջապես հետո ընդունվել եմ Մոսկվայի Ս. Գերասիմովի անվան համամիութենական կինոնստիտուտը, ավարտել Ա. Զիգարխանյանի կինոդերասանական կուրսը: Դա 88-ին էր: Այնուհետեւ աշխատել եմ բազմաթիվ եւ պետական, եւ անկախ թատրոններում: Մի քանի ամիս առաջ Շուշիից հրավեր ստացա թատրոնի գեղարվեստական ղեկավար եւ տնօրեն Սոնա Հովհաննիսյանից: Եվ ահա, այսօր կարծես երեւանում կայանում է մեր թատրոնի գինեծոնը:

- Ինչպե՞ս է ընդունում հանդիսատեսը:

- Ինքների կտեսնեք: Միայն ասենք, որ չափազանց կարելի է, որ ներկայացման ընթացքում հանդիսատեսը մոռանում է, թե Շուշիի թատրոնն է, թե ինչ լավ է, որ Շուշին թատրոն ունի, եւ տրվում է բուն ներկայացմանը: Սա արդեն ինչ-որ բան նշանակում է հենց գեղարվեստական արժեքի իմաստով:

- Երբ վերակառուցվում էր եկեղեցին, բոլորիս գիտակցության մեջ կար, որ Շուշին հայանում է, - ասում է թատրոնի տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Սոնա Հովհաննիսյանը: Կաղուց էի կարդացել, որ ազգին ազգ է պահում եկեղեցին, լեզուն եւ մշակույթը: Մեկը պիտի աներ այս գործը, այնպես ստացվեց, որ մենք արեցինք 94թ. վերջին ընտանիքով շտապեցի հաստատվել Շուշիում: Երեք տարի անընդմեջ փորձում էի թատերախումբ հավաքել, բայց չէր ստացվում: Եհիշտ է այդ տարիների ընթացքում ներկայացումներ ունեցել ենք, բայց մարդիկ գիշեր-ցերեկ աշխատում էին անվճար, անհաստիք: Երեւի այս մարդկանց համառնվիրումի արգասիքն էր, որ թատրոնն այսօր պետականի կոչում ստացավ եւ օժանդակություն Մարդիկ կան, որ արդեն 5-6 տարի առանց հուսալքման եւ առանց աշխատավարձի ինձ հետ միասին պայքարել են այս երազանքն իրականացնելու համար: Բայց դժվարություններն էլ մերն են, մեզ համար շատ քաղցր են: Տառապանքով հասնում ենք արդյունքի, եւ տառապանքով հասածն ավելի կարելի է թվում մեզ: Պատերազմից 8 տարի անց դեռ զգացվում է ավերածությունը, արյունը: Եվ մենք մեզ հպարտ ու երջանիկ ենք զգում, որ մարդկանց հոգիներում փոքրիշատե վերացնում ենք պատերազմի արհավիրքների մնացուկները:

